

ՌԻԶԱՐԴ ՖԼԱՆԱԳԱՆ

ԳՈՒԼԴԻ ԶԿՆԱԳԻՐՔԸ

ՎԵՊ

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԶԿՆԵՐՈՎ



Գ Ի Տ Ա Ն Ք  
*Երևան 2006*



**Australian Government**



*This project has been assisted by the Australian Government through the Australia Council, its arts funding and advisory body*

*Այս նախագծին սատարել է Ավստրալիայի կառավարությունը Ավստրալիայի խորհրդի միջոցով, որն արվեստի դրամավորման և դրա վերաբերյալ խորհրդատվության կառավարության մարմինն է*

Չկների նկարները վերարտադրվել են տաժանակիր նկարիչ Ուիլյամ Բյուլլու Գուլդի «Գուլդի ձկնագիրքը» գրքից՝ Տասնամիայի պետական գրադարանին կից Օլպորտի գրադարանի և գեղարվեստների թանգարանի թույլտվությամբ

Նվիրվում է Ռուզվին, Ջինին և Էլյազային, որոնք լողում են գնայլանքի հետզհետե լայնացող շրջաններով

**Richard Flanagan, Gould's Book of Fish**

**Ֆլանագան, Ռիչարդ**

**Գուլդի ձկնագիրքը** -եր.: Գիտանք, 2006, 328 էջ.

Այս արտառոց, պատկերավոր և բազմաշերտ վեպը պատմում է տաժանակիրների, նրանց սիրո ու տանջանքների մասին և լի է հեզնախառն զավեշտով: Խելացնորության աստիճանի հասցնող արագությամբ հեղինակը նետում է ընթերցողին իրադարձությունների հորձանուտը՝ պատճառելով մեկ հաճելի զվարճություն, մեկ զարհուրելի զգվանք: Տասնամիայի առափնյա գաղութակղզում ցմահ բանտարկյալ Գուլդը հաջողությամբ վարում է իր գոյատևման մարտը՝ պետերին հաճոյանալու համար նկարելով ամեն բան՝ ձկներ, հայտնի նկարիչների կեղծ նմանակներ, որմնանկարներ: Եվ լոկ իր համար ձկներ նկարելով՝ Գուլդը կարողանում է համատարած դաժանության միջավայրում փրկվել խելագարությունից՝ շարունակելով հավատալ, որ կյանքն իմաստ ունի, թեև «դա առեղծված է, իսկ սերն առեղծված է առեղծվածում»: Սա հեշտությամբ կարդացվող գիրք չէ: Սակայն հերոսները՝ նկարիչ Գուլդը, բռնակալ Գաղութապետը, գաղութի Բժիշկը, առեղծվածային Արքան, որի ինքնությունը պարզվում է գրքի վերջում, և Մույնիսկ Քասլրեյ անունով հսկա խոզը, երկար ժամանակ տիրում են ձեր մտքերին: 2002թ. այս վեպն ստացել է բրիտանական Համագործակցության մրցանակը և բազմաթիվ գովեստների արժանացել համաշխարհային մանուկում, որոնց մի փոքր մասը ներկայացված է գրքի կազմի հետևին:

**ISBN 99930-963-9-3**

© Richard Flanagan, 2001

© Գիտանք, հայերեն թարգմանության համար, 2006



### ՀԱՍՏԱՓՈՐ ՁԻԱՁՈՒԿ

*«Ձկնագրքի» հայտնաբերումը \* Կեղծ հնաոճ կահույքը և հավատքի բուժումը \* Քոնգան \* Պարոն Հանգը և «Սորի Դիկը» \* Վիկտոր Յյուգոն և Տեր Աստվածը \* Չնաբուք \* Ինչո՞ւ մարդկանց պատմածն ընդհանուր ոչինչ չունի պատմության հետ \* Գիրքն անհետանում է \* Տատաքույր Սեյզիի մահը \* Իմ բարոյագրկումը \* Ձիաձկան արուն սերունդ է տալիս \* Անկում*

### I

Այն զարմանքը, որ զգացի, երբ առաջին անգամ տեսա «Ձկնագիրքը», առ այսօր էլ չի անցել. դա նման է լույս ճառագող նախշի՝ ինչ-որ բանով մարմար հիշեցնող խայտավոր լուսածնի, որն այն անմոռաց առավոտ իր վրա էր գամել հայացքս. այդ զգացումն առ այսօր էլ շողափայլում է սահմռկելի հորձանուտների նման՝ դյութելով հոգիս, գունազարդելով մտքերս: Հենց այդ պահից էլ սիրտս, և որ ավելի ցավալի է, ողջ կյանքս սկսեցին վերածվել մի տարօրինակ մանվածք ունեցող խճճված կծիկի, որն ստորև ներկայացվող պատմությունն է:

Իսկ ի՞նչով էր առանձնահատուկ այդ մեղմ շողափայլը, որն ինձ հարկադրեց ենթադրել, թե իբր նորից ու նորից եմ ապրում իմ կյանքը՝ մեկընդմիջտ հարապտույտ անիվում հայտնված հնդիկ խորիրդապաշտի նման, և որը պետք է դառնար իմ ճակատագիրը, ինձ գրկեր սեփական եսից, իմ անցյալն ու ապագան շաղկապեր մի անբաժանելի ամբողջի մեջ:

Միգրացե դա հմայության առկայծո՞ւմ էր, որը ծորում էր այս կախարդական ձեռագրից, որտեղից դուրս էին լողում ձիաձկները, վիշապաձկներն ու աստղաձկները՝ պայծառ լույս բերելով վաղորդյան կիսախավար: Իսկ միգրացե իմ մտքերի խղճուկ սնափառությունն է ինձ ստիպել մտածել, թե իբր բոլոր մարդիկ, բոլոր ձկներն ու ընդհանրապես աշխարհն ամբողջապես ամփոփված են ներսումս: Թե՞ այս ամենն ավելի պարզ պատճառ ուներ՝ վատ ընկերական շրջապատը և էլ ավելի վատ խմիչքը. միգրացե հենց դրանք ինձ մղեցին այն հրեշավոր հորձանուտը, որից մինչ օրս ոչ մի կերպ չեմ կարողանում դուրս գալ:

Ըստ Գուլդի՝ *խառնվածքն ու ճակատագիրը* փաստորեն միևնույն բանն են նշանակում. և դրանում, ինչպես որ շատ այլ բաներում, նա ամենևին էլ իրավացի չէր:

Ա՛խ, իմ սիրելի, թանկագին, հիմար Բիլի Գուլդը՝ սիրո մասին իր բոլոր անհեթեթ պատմություններով, այնպիսի մեծ սիրո, որպիսին այժմ էլ չես գտնի, ասեմք, այն ժամանակ էլ անհնար էր գտնել, թեպետ և նա ինքն էլ էր զգում դա... Բայց կարծեմ նյութից շեղվեցի:

Եվ այսպես, նրա գարշահոտ ձկների շուրջը խորհրդածություններս ինձ ստիպեցին գիտակցել մի ճշմարտություն՝ մենք, այսինքն՝ մեր կյանքն ու հոգիները, գտնվում ենք մշտական քայքայման ու վերաստեղծման հարընթացում. ես զարմանքով հայտնաբերեցի, որ այդ գիրքը պատմությունն է իմ սրտի, որը նման է գոմաղբի կույտի:

Նույնիսկ իմ տենդագին գրիչն անզոր է անգամ մոտավոր նկարագրել այն թրթիռը, այն հիացմունքը, որոնք համակեցին ինձ, երբ առաջին անգամ բացեցի «Ձկնագիրքը». դրանք այնքան ուժեղ էին, որ այդ պահին ինձ թվաց, թե մնացած ամբողջ աշխարհը, այո՛, *ողջ աշխարհն* ընկղմվել է խավարի մեջ, և ամբողջ տիեզերքում մնացած միակ լույսն այն լույսն էր, որը հին էջերից շիթարծակվում էր ուղիղ լայն բացված աչքերիս մեջ:

Ես այն ժամանակ գործազուրկ էի. այն ժամանակ Տասմանիայում աշխատանք ճարելը դժվար էր, իսկ այժմ՝ առավել ևս: Չավանաբար այն ժամանակ հոգիս սովորականից ավելի ընկալունակ էր ամեն կարգի հրաշքների հանդեպ: Ինչպես որ պորտուգալացի աղքատ գեղջկուհի աղջնակը Սուրբ Կույսին տեսնում է, որովհետև չի ցանկանում նկատել որևէ այլ բան, այդպես էլ ես անչափ ուժգին էի ցանկա-

նուն չնկատել ինձ շրջապատող աշխարհը: Հավանաբար, եթե Տասնամիան սովորական վայր լիներ, որտեղ մարդիկ պատշաճ աշխատանք ունեն, ժամեր են անցկացնում ճանապարհին, որպեսզի բնական հոգսերի մեջ էլ ավելի շատ ժամեր անցկացնեն՝ սպասելով, թե երբ հնարավոր կլինի վերադառնալ բնական մենակության, որտեղ ոչ ոք երբևէ չի պատկերացրել, թե ինչ է նշանակում ծիածուկ լինել, ապա այնպիսի արտառոց բան, ինչպիսին մարդու վերածվելն է ձկան, չէր պատահի:

Ես գրեցի «հավանաբար», սակայն, անկեղծ ասած, վստահ չեմ:

Ո՞վ գիտի, միգուցե Բեռլինում ու Բուենոս Այրեսում նման բաներ հաճախ են պատահում, և մարդկանց պարզապես հարմար չէ դա խոստովանելը: Միգուցե Սուրբ Կույսը կանոնավոր այցելում է Նյու Յորքի շրջանները, Բեռլինի բազմահարկ սոսկալի շենքերը և Միդեյի արևմտյան արվարձանները, մինչդեռ բոլորը ձևացնում են, թե նա այնտեղ չէ՝ հուսալով, թե նա շուտով կհեռանա և այլևս իրենց անհարմարության մեջ չի գցի: Միգուցե նոր Ֆաթման ինչ-որ տեղ Ռևեսբիի բանվորական ակումբի լայն տարածքում է, և նրա ոչ երկրային փայլատակունը երևում է աղոտ առկայծող լուսատախտակի վերևում, որի վրա գրված է. «ԽԱՂԱՑԵՔ ՔՍԱՆՄԵԿ»:

Ի՞նչ իմանաս, կարող է հենց այն ժամանակ, երբ բոլորը մեջքով են նստած, քանի որ աչքերը հառած են փոքր լուսապաստառների, ոչ ոք չի նկատում տարեց կնոջը, որը ճախրում է օդում՝ լրացնելով լոտոյի քարտը: Տեսիլները միգուցե այժմ մեզ չեն այցելում այն պատճառով, որ կորցրել ենք մեր վեցերորդ զգայարանը, որը թույլ է տալիս հրաշքները տեսնել ու հասկանալ, որ մենք մի այլ բան ենք՝ ավելին, քան մեզ ասում էին: Միգուցե բնաշրջությունը շարունակել էր հակառակ ուղղությամբ ընթանալ ավելի երկար ժամանակ, քան ես ենթադրում էի, և մենք բոլորս արդեն թախծոտ ու համր ձկներ ենք: Ինչպես ասացի, ես ոչ մի բանում վստահ չեմ, և միակ մարդիկ, որոնց վստահում եմ՝ պարոն Հանգը և Քոնգան նույնպես ոչ մի բանում վստահ չեն:

Գիշտն ասած, ես հանգել եմ այն եզրակացության, որ մեր կյանքում քիչ բան կա, ինչում կարելի է համոզված լինել: Բայց ես գնահատում եմ ճշմարտությունը, թեև կարող է թվալ, թե փորձում եմ ապացուցել հակառակը: «Բայց որտե՞ղ փնտրել այդ ճշմարտություն-

նը», - շարունակում էր ձկներին հարցնել Գուլդը՝ նույնիսկ անվերջ ու անպտուղ հարցուփորձերով դրանց տանջամահ անելուց հետո:

Հիմա ինձնից խլել են և՛ նրա գիրքը, և՛ մնացած ամեն ինչ, բայց, ի վերջո, ի՞նչ են գրքերը, եթե ոչ հեքիաթներ, որոնց պետք չէ հավատալ:

Ժամանակին մի մարդ է եղել Սիդ Զամեթ անունով, որը հայտնաբերել էր, որ ինքը նա չէ, ում սովոր էր իրեն համարել:

Ժամանակին հրաշքներ են եղել, և վերոհիշյալ Զամեթը հավատացել էր, որ խրվել էր դրանցից մեկի մեջ: Մինչ այդ օրը նա մի կերպ ապրում էր, ինչը դեռ շատ մեղմ էր ասված, քանի որ նրա գոյությունը հիասթափությունների համատարած մի շղթա էր: Այդ օրից ի վեր նա ոչ մի բանի չի հավատում:

Ժամանակին մի մարդ է եղել Սիդ Զամեթ անունով, որը ձկների մասին տարօրինակ գրքի շողափայլում տեսել էր իր կյանքի պատմությունը, որն սկսվել էր հեքիաթի մման և ավարտվել որպես պարզունակ մանկական ոտանավոր, որտեղ նա փայտե ձիուկով արշավում էր Բանբերի Քրոս:

Ժամանակին ահավոր բաներ են պատահել, բայց բոլորը գիտեն, որ դրանք պատահել են շատ վաղուց և շատ հեռավոր երկրներում՝ ո՛չ այստեղ, ո՛չ հիմա և ո՛չ էլ մեզ հետ:

...Այն շաբաթը, որ մենք չէինք տեսնվել, պարոն Լեմպրիերն զբաղված էր սևամորթների գլուխներով. նա հրաժարվել էր դրանք տակառներով փոխադրելու մտքից և փոխարենը որոշել էր վերածել գանգերի, որոնք, քարտագրելու և Անգլիա ուղարկելու նպատակով, նրա համար պատրաստում էր մի համր տաժանակիր:

Տարօրինակ էր, բայց տանը ոչ ոք չկար: Էլ ավելի տարօրինակ էր այն, որ խոզանոցից չէին լսվում ո՛չ կատաղի հարվածներ, ո՛չ էլ ճղողոց: Ես շրջանցեցի տունը, որպեսզի տեսնեմ, թե արդյո՞ք Բժիշկն զբաղված չէ Քասլրեյի հետ ինչ-որ անսովոր լռեյայն խորհրդածությանմբ: Խոզանոցում տեսա միայն Քասլրեյին, որը, թվում էր, վերջապես կուշտ կերել էր և կողքի ընկած՝ խաղաղ քնած էր խոր, երջանիկ քնով: Բայց նրա տիրոջ ու բարեկամի՝ պարոն Լեմպրիերի ներկայության ոչ մի հետք չկար:

Միայն մի որոշ ժամանակ անց աչքիս զարնեց խոզի մռուփ կասկածելի ճերմակությունը, որը նման էր ծերունու խուզած մազերի: Բայց այդ ժամանակ ինձ պարուրեց գոլորշու մի ծավալուն ամպ՝

այնքան թանձր, որ խոզանոցը, որից դա դուրս սահեց, գրեթե կորավ տեսադաշտիցս. վրաս փչեց այնպիսի դառնաթթու մի հոտ, որ ուղեղս մթազնեց: Ես կկոցեցի աչքերս՝ մանկան հավատով, թե դա կստիպի, որ ինձ շրջապատող իրականությունն անհետանա: Բայց հոտն ավելի ու ավելի էր սաստկանում՝ դառնալով պարզապես անտանելի, կարծես գլխիս ճնշող կապարե բեռ լիներ, այնքան թաց, որ դեմքս ասես շփել էին մի ինչ-որ թթու բանով, և այնքան կծու, որ ռունգերս այրվում էին:

Ու երբ վերջապես աչքերս նորից բացեցի ու տեսա, որ այդ հեղձուցիչ գուրոշին հետ է քաշվել, ինչպես թատրոնի վարագույրը, սխալվել չէի կարող. ես արդեն հասկանում էի, թե իմ առջև ինչ է խոյացել այս կեղտոտ բեմահարթակին:

## VI

Դա խոզի կղանքի կույտ էր:

Շատ մեծ:

Հավանաբար, սարսուռով մտածեցի ես, խոզի կղանքի ամենամեծ կույտն է ամբողջ աշխարհում այս առավոտյան: Միգուցե ամբողջ պատմության ընթացքում: Տեսարանը հիրավի ապշեցուցիչ էր, դժվար էր անմիջապես հաշտվել այն մտքի հետ, որ դա խոզի կեղտ է: Այս կղանքե մխացող կոթողը փայլվում էր ծմեռնամուտի նզովյալ առավոտի ճառագայթներում: Դա միանգամայն կարող էր մաքուր և շատ արժեքավոր ոսկու բնակտորի տեղ անցնել, եթե հենց ստորոտին ցցված չլիներ կեղտոտ, որոշ չափով փայլը կորցրած, բայց այնքան ճանաչելի էժանագին կոշիկի անագե ճարմանդը:

Ես բարձրացա պատնեշին և սկսեցի ավելի մոտիկից նայել: Խոզի շողացող կղանքակույտի շուրջը պղպջացող, ասես խառնիչով հարված հողի վրա ես տեսա ինչ-որ բաքոսային շվայտության մնացորդներ՝ վերնաշապկի ծվեմներ (արյունոտ), ֆրակի հետնափեշ (պոկված), կապույտ մետաքսե թևք (պատառոտված) և մետաքսե կեղտոտ թաշկինակի կես (փսլնքոտ):

Հետո նկատեցի այն, ինչը, ցավոք, խիստ հիշեցնում էր մարդու ուլոք: Այլ ոսկորներ՝ արյունոտ, աղտոտ: Կողոսկրեր: Ազդրոսկրեր, իսկ ապա նաև մյուսները՝ ավելի մանրերը: Սրնքոսկրեր: Նախաբազկի ոսկորներ: Ողներ: Հետո տեսա նաև մի մեծ արյունվազ գանգ, որը հսկայական ճարպագունդ էր հիշեցնում. դա ընկած էր կողքի՝ ասես

Խաղաղ օվկիանոսի կղզիների տապալված մի կուռք: Քասլրեյը գնդացրեց, և ինձ նորից հասավ քաղցրաթթու հոտի հուժկու ալիքը. քամու ուղղությամբ կանգնած՝ ես նույն պահին հասկացա, որ այս արդեն ծանոթ գարշահոտը, ոչ այլ ինչ է, եթե ոչ հյուլենների տրոհված պարոն Լեմպրիերի միս ու արյունը: